# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 237-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՄԵԼԱՆՅԱ ՎԱՂԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ՆՈՆԱ ՄԻՍԱԿԻ ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻՆ, ՌՈԶԱ ՄԻՍԱԿԻ ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՄԻՍԱԿԻ ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,082ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,02879ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ.-ի թիվ 2387-Ն, 29.12.2011 թվականի թիվ 1920-Ն որոշումները՝ որոշում եմ.

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Մելանյա Վաղիկի Սարգսյանին, Նոնա Միսակի Ղարախանյանին, Ռոզա Միսակի Ղարախանյանին և Արշալույս Միսակի Ղարախանյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 0.082 հա հողամասից առանձնացվող 0.02879 հա հողակտորի (ծածկագիր՝ 10-008-0050-0010, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) գործառնական նշանակությունը փոխադրել հասարակական կառուցապատման գործառնական դասակարգման:

2. Առանձնացվող 2 հողամասերին տրամադրել հետևյալ հետևյալ հասցեները՝

1) 0,05321հա հողամասին՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Արենի, 2-րդ փողոց, 8 բնակելի տուն

2) 0,02879հա հողամասին՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Արենի, 2-րդ փողոց, 8/1 առևտրի սրահ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ